ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՀԱՄԱԿՑՎԱԾ (ՀԻԲՐԻԴԱՅԻՆ) ՆԻՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **«29» հունվարի 2025 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2025 թվականի հունվարի 24-ի № 1-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2025 թվականի հունվարի 29-ին, ժամը 9^{00}-ին և ավարտվել՝ ժամը 15^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար,

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Վ. Սիրունյանը - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ,

Ա. Բաղդասարյանը - «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ,

Բ. Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ,
Ա. Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական,
Ա. Հակոբյանը	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2024 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

Օրակարգային հարցերի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Վ. Սիրունյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Ա. Բաղդասարյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Բ. Փափազյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Բախշյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Հակոբյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝
Հարց՝ 7 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի հարցերին քվեարկել են «կողմ»:

Խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան հաշվետվությանը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2024 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

1/31/2025

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Խորհրդի նախագահ՝ _____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝ _____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն